ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

22 մարտի 2016թ. թիվ 79-Ա

Հ.ԴԱՎԹՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 109 հոդվածի 1-ին կետի 11-րդ ենթակետով և 130-րդ հոդվածով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 4-րդ կետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետով, հիմք ընդունելով ՔԿԱԳ Սպիտակի տարածքային ստորաբաժանման կողմից 2016 թվականի մարտի 16-ին տրված ԱԲ N 226588 մահվան վկայականը՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրեն Հրաչյա Դավթյանի հետ 2013 թվականի մայիսի 8-ին կնքված աշխատանքային պայմանագիրը համարել լուծված 2016 թվականի մարտի 12-ից՝ նրա մահվան կապակցությամբ:

2. «ՀՀ Լոռու մարզի Սպիտակի թիվ 5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝

Կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. մարտի 22
ք.Վանաձոր